ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2006թ. հունվար-մարտին

(%)

	2006 թվական				
	հունվարը	փետրվարը	մարտը	*մարտը*	
	նախորդ ամսվա նկատմամբ			2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ
Սպառողական գների ինդեքս - ընդամենը	103.6	100.2	100.4	104.2	116.4
այդ թվում					
Սպառման ապրանքներ	104.3	100.2	100.5	105.0	118.8
Պարենային ապրանքներ	105.8	100.2	100.5	106.5	124.4
Ոգելից խմիչք, ծխախոտ	100.2	100.2	100.0	100.4	101.6
Ոչ պարենային ապրանքներ	100.0	100.1	100.5	100.6	105.5
Ծառայություններ	100.1	100.3	100.0	100.4	105.5

Սպառողական գներ: 2006թ. մարտին շարունակվել է ՀՀ սպառողական շուկայում հունվար-փետրվարին արձանագրված գնաճի միտումը և երեք ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 4.2%, այդ թվում, մարտին փետրվարի նկատմամբ սպառողական գներն աճել են 0.4% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է 0.9% գնանկում):

2006թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 0.5%, ոչ պարենային ապրանքների՝ 0.5% գնաճ, իսկ ծառայությունների ոլորտում սակագների ընդհանուր մակարդակը մնացել է անփոփոխ:

Սպառողական գների ինդեքսը 2006թ. մարտին 2005թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 104.2%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 105.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.6%, իսկ ծառայությունների սակագներինը՝ 100.4%:

Սպառողական գների հավելաճը 1997-2006թթ. մարտին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%)



2006թ. մարտին 2005թ. մարտի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.3%, այդ թվում՝ պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 99.2%, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.6%, ծառայությունների սակագներինը՝ 102.9%, իսկ հունվար-մարտին 2005թ. հունվար-մարտի համեմատ՝ համապատասխանաբար 99.1%, 97.7, 101.9 և 102.7%:

Հանրապետությունում դիտարկված 8 քաղաքներում 2006թ. մարտին փետրվարի համեմատ սպառողական գներն աճել են 0.1-1.3% (գնաճի անենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Մարտունիում): Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.4%, իսկ Վաղարշապատ, Հրազդան, Չարենցավան քաղաքներում արձանագրվել է 0.1% գնանկում:

2006թ. մարտին 2002թ. համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 116.4%, այդ թվում՝ պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 122.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 105.5%, ծառայությունների սակագներինը՝ 105.5%:

Պարենային ապրանքների գներ: 2006թ. մարտին փետրվարի համեմատ պարենային ապրանք-

ների շուկայում արձանագրվել է 0.5% գնաճ: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 7-ում գրանցվել է 0.1-21.2% գնաճ, 4-ում՝ 5.6-0.2% գնանկում, իսկ 2-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2006թ. մարտին փետրվարի համեմատ ձկնամթերքի ապրանքախմբում գրանցվել է 21.2% գնաճ, ինչը հիմնականում «Սիգ» տեսակի թարմ ձկան 25.2% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում գրանցվել է ձկնամթերքի 11.9-27.4% գնաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Երևանում), իսկ ք. Վանաձորում՝ 3.2% գնանկում:

2006թ. մարտին շարունակվել է դեռևս հունվարին արձանագրված շաքարավազի գնաճի միտումը և երեք ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 17.2%: 2006թ. մարտին փետրվարի համեմատ շաքարավազի գինն աճել է 7.2%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է շաքարավազի 3.1-10.3% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում շաքարավազի գինն աճել է 6.8%:

Մսամթերքի ապրանքախմբում 2006թ. մարտին փետրվարի համեմատ գրանցվել է 0.5% գնաճ, ինչը հիմնականում ոչխարի (2.3%) և տավարի (1.4%) մսի գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է մսամթերքի 0.1-3.3% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Եղեգնաձորում): Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 0.2%:

Կաթնամթերքի, հրուշակեղենի, այլ մթերքի, հացամթերքի ապրանքախմբերում 2006թ. մարտին փետրվարի համեմատ արձանագրվել է 0.1-0.4% գնաճ, իսկ սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ոգելից խմիչքի ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Ձվի միջին հանրապետական գինը 2006թ. փետրվար-մարտին նվազել է 13.6%, ընդ որում, մարտին փետրվարի համեմատ ձվի գնանկումը կազմել է 5.6%: Հանրապետության դիտարկված քաղաքներից 9-ում արձանագրվել է ձվի 9.7- 0.7% գնանկում (գնանկման ամենաբարձր ցուցանիշն անձանագրվել է ք. Գյումրիում): Մայրաքաղաքում ձվի գնանկումը կազմել է 5.8%, իսկ ք. Մարտունիում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2006թ. մարտին փետրվարի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը հանրապետությունում կազմել է 1.9%, ինչը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից 5.9 տոկոսային կետով (7.8% գնանկում): Նշված ժամանակահատվածում արձանագրվել է կաղամբի (13.1%), վարունգի (7.5%), կանաչ սոխի (7.1%), գլուխ սոխի (4.6%), կարտոֆիլի (0.4%) գնանկում: Միաժամանակ, հանրապետությունում 2.8-12.4% աճել են լոլիկի, կանաչ պղպեղի, սխտորի, գազարի, ճակնդեղի գները: Հանրապետության դիտարկված քաղաքներից 6-ում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 7.8-1.7% գնանկում (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք.Դիլիջանում), երեք քաղաքներում՝0.8-4.6% գնաճ, իսկ ք. Գյումրիում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Մրգի ապրանքախմբում 2006թ. փետրվար-մարտին հանրապետությունում գրանցվել է 3.9% ընդհանուր գնանկում, ընդ որում, մարտին փետրվարի համեմատ մրգի գնանկումը կազմել է 0.8%: Վերջինս մեծապես պայմանավորվել է խաղողի (4.8%), խնձորի (2.8%), տանձի (0.8%), ինչպես նաև ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից՝ նարնջի (2.8%), կիտրոնի (2.8%), ադամաթզի (2.5%) գնանկումով: Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում արձանագրվել է մրգի 3.0-0.9% գնանկում (գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վաղարշապատում), իսկ 4-ում՝ 0.6-7.7% գնաճ: Մայրաքաղաքում գրանցվել է մրգի 1.3% գնանկում:

Կենդանական և բուսական յուղի ապրանքախմբում 2006թ. մարտին փետրվարի համեմատ արձանագրվել է 0.2% գնանկում, իսկ ոգելից խմիչքի և ծխախոտի գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Ոչ պարենային ապրանքների գներ: Ոչ պարենային ապրանքների շուկայում 2006թ. մարտին փետրվարի համեմատ գրանցված 0.5% գնաճը հիմնականում պայմանավորվել է այգեգործական ապրանքների 0.8%, լվացող միջոցների 2.7%, ոսկերչական ապրանքների 5.2% գնաճով: Կահույքի, մշակույթի, գեղահարդարման ապրանքների, շինանյութերի, հագուստի և կտորեղենի, կոշկեղենի ապրանքախմբերում նշված ժամանակահատվածում արձանագրվել է 0.1-0.3% գնաճ, վառելիքի, անձնապիտո ապրանքների ապրանքախմբերում՝ 0.1% գնանկում, իսկ դիտարկվող մյուս ապրանքախմբերում գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

2006թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում բենզինի գինը մնացել է անփոփոխ, իսկ դիզելային վառելիքի գինը նշված ժամանակահատվածում աճել է 0.1%: Մարտին 2005թ. մարտի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է համապատասխանաբար 14.4% և 12.4%, իսկ 2002թ. համեմատ՝ համապատասխանաբար 33.3% և 58.9%:

Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2006թ. մարտին փետրվարի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.6% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Երևան և Թալին քաղաքներում): Ք. Դիլիջանում արձանագրվել է 0.1% գնանկում, իսկ ք. Եղեգնաձորում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Ծառայությունների սակագներ: 2006թ. մարտին փետրվարի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում գրանցված սակագների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում դիտարկված առանձին ծառայությունների գծով արձանագրվել են սակագների փոփոխություններ թե՛ աճի, թե՛ նվազման միտումով: Կապի, հանգստի կազմակերպման, կենցաղային ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում աճել են համապատասխանաբար 2.1%, 1.3 և 0.1%: Մշակույթի, բուժսպասարկման, տրանսպորտի, հանրային սննդի ծառայությունների ոլորտներում արձանագրվել է սակագների 3.4-0.1% նվազում, իսկ բնակարանային-կոմունալ, կրթության համակարգի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում 2006թ. մարտին փետրվարի համեմատ գրանցվել է ծառայությունների սակագների 0.1-0.6% հավելաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Դիլիջանում), 4-ում՝ սակագների 0.2-0.1% նվազում, իսկ Հրազդան, Չարենցավան քաղաքներում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2006թ. փետրվարի 21-ից մարտի 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների գծով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2006թ. հունվար-մարտին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



	հունվար	փետրվար	մարտ
Սպառողական գների ինդեքս	3.6	0.2	0.4
Պարենային ապրանքների	5.2	0.2	0.5
Ոչ պարենային ապրանքների	0.0	0.1	0.5
Ծառայությունների	0.1	0.3	0.0

Արտարժութային շուկա: 2006թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետության սպառողական և արժութային շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 0.4% և 0.2% հավելաճ: Մարտին 2005թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի հավելաճերը կազմել են համապատասխանաբար 4.2% և 0.4%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 3.7% հավելաճին զուգընթաց գրանցվել է հաշվարկային փոխարժեքի 4.2% նվազում: 2006թ. մարտին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 451.0 դրամ, ինչը ցածր է նախորդ տարվա մարտի համապատասխան ցուցանիշից 3.2% (566.01 դրամ):